



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 15 ՄԱՅԻՍ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:
Ամբողջութեամբ մաքրէ յիս իմ անօրէնութենէս. եւ իմ մեղքես յիս սրբէ:
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքես չ'ելլեր:
Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:
Ուստի ներումիդ ցօղով սրբէ յիս, եւ պիտի մաքրուիմ,
լուա յիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
Ցնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,
եւ փառապած ոսկորներս պիտի ցնծան:
Նկարի մի՛ առներ մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ո՛վ Աստուած,
նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:
Ներկայութենէդ մի՛ վրկեր յիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ յիս:
Փրկութեանդ ցնծութիւնը Կուր ինձի՛
եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:
Որպէսպի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ,
եւ մեղաւորները քեզի դառնան:
Բաց իմ շրթներս, ո՛վ Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:
Եթէ Կոհ կամենայիր՝ պիտի մատուցանէի, բայց ողջակէզ դուն չես ուկեր:
Ուկած Կոհդ զղջումով լի հոգի մըն է, ո՛վ Աստուած,
հեքուաբար մի՛ մերժեր զղջումնալից եւ ընկճուած իմ սիրտս:

ՇԱՐԱԿԱՆ ԱՐՈՐԹ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

5:16-20

ԱՂՕԹՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ (5:16-20)

Տիրոջ անունով ու հաւապքով եղած աղօթքը ոչ միայն հիւանդը պիտի բժշկէ, այլ եթէ մեղք գործած է՝ պիտի ներէ անոր (15 հմբ): Քրիստոսի աշխարհ գալուն եւ մարդեղացումին հիմնական ու գլխաւոր նպատակը մեղքերու քաւութիւն է: Անդամալոյծին օրինակով. «մեղքերդ ներուած են քեզի» (Մարթ 9:2): Աւերարանիչները մեզի կը ներկայացնեն Քրիստոսի կարարած հրաշքներն ու բժշկութիւնները, սակայն, Քրիստոս աշխարհ չեկաւ որպէս հիւանդութիւններ բժշկող, այլ՝ որպէս Փրկիչ, փրկելու մեզ մեղքի ստրկութենէն, եւ շնորհելու մեղքերու քաւութիւն, ինչպէս Ինք պիտի ըսէ. «**Պէտք է զիպնաք, որ Մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը ներելու**» (Մարթ 9:6): Ահա նոյն հասկացողութեամբ, Յակոբոս Առաքեալ այսպէս էլ կը շեշտէ, որ այն աղօթքը որ քեզի պիտի ունենայ Տիրոս անունով ու հաւապքով, միայն չլլայ բժշկութեան համար, այլ նաեւ մեղքերու թողութեան: Եթէ նոյնիսկ այդ հիւանդութիւնն ալ մեղքի պարճառով էր, այդ իմաստով ալ բժշկութիւն գտնէ անձը: Այս պարագային միայն ֆիզիքական հիւանդութեան մասին չէ խօսքը, այլ՝ ֆիզիքական, մտային ու հոգեւոր:

Յակոբոս Առաքեալ յարակօրէն ցոյց կու տայ, որ հաւապքով եղած աղօթքը պիտի բժշկէ հիւանդը, բայց Աստուածաշնչական հապուածներու կը հանդիպինք, որոնք ցոյց կու տան, որ կարգ մը քեզի պարուած Ինք չուզեր հիւանդին բժշկութիւնը, օրինակ Պօղոսի պարագան, երբ երեք անգամ խնդրեց, որ իր մարմինին մէջէն փուշը հանէ: Եթէ այդպէս է պարագան ուրեմն ինչպէս հասկնալ Առաքեալին խօսքը երբ կ'ըսէ. «հաւապքով եղած աղօթքը պիտի բժշկէ հիւանդը»: Այնպէս մը ընել, որ հաւապքով եղած աղօթքը ունենայ ամբողջական վստահութիւնը Աստուծոյ ամենագորութեան ու ամենակարողութեան, ու մանաւանդ՝ Աստուծոյ կամքին կարարումին: Եւ այս հաւապքը, որ Աստուծոյ կողմէ քրուած պարգեւ է, կը գործէ միայն այն արեւն երբ Աստուծոյ կամքն է որ բժշկուի հիւանդը: Մանաւանդ երբ նկատի պէտք է ունենանք որ Տէրը Ինքն է որ հիւանդը ուրքի պիտի հանէ: Իսկ եթէ մեղք ալ կայ Աստուած պիտի ներէ անոր: Ահա հիւանդութիւնը առիթ կ'ըլլայ շնորհքի, որպէսզի անդրադառնանք եւ եթէ երբեք որեւէ քեզի մեղքի մէջ ենք եւ չենք խտրովանած, խտրովանելու եւ ներում գտնելու:

Ուստի, Յակոբոս Առաքեալ կը շարունակէ ըսելով. «**Ձեր մեղքերը իրարու խոստովանեցէք եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք**» (16 հմբ): Ուրեմն, մեղքերու քաւութիւն սրանալու համար պէտք է խոստովանիլ: Խոստովանիլ իրարու: Երբ այսօր կը դժուարանանք իրարու խոստովանելու ինչ-ինչ պարճառներով: Իրարու նկարմամբ անվստահութիւն: Իրարու նկարմամբ ճշմարիտ սիրոյ պակաս: Լսելով այդ խոստովանութիւնը աղօթքի նիւթ ընելու եւ ոչ թէ բամբասանքի: Այդ իսկ է պարճառը, որ եկեղեցւոյ մէջ որդեգրուեցաւ հաւաքական խոստովանանքի կերպը: Հերեւաբար, որքանով պարտասար ենք լսելու մեկզմիսի խոստովանութիւնը եւ զայն վերածելու աղօթքի, որպէսզի եղած խոստովանութիւնը ներում գտնէ Աստուծմէ: Որովհետեւ, եթէ երբեք Սուրբ Հոգիով չենք առաջնորդուիր որքան վրանգաւոր դերի մէջ կ'ըլլանք որպէս լսող կամ որպէս խոստովանող: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «*Եթէ պարտասար որ մէկը ունի յանցանքի վրայ բռնուի, դուք՝ որ Սուրբ Հոգիով կ'առաջնորդուիք՝ պէտք է հեզութեամբ զայն ուղիղ ճամբու բերէք: Նաեւ զգոյշ եղէք դուք ձեզի, որպէսզի չըլլայ որ դուք ալ փորձութեան մէջ իյնաք*» (Գաղ 6:1): Անոր համար, որքան զգոյշ պէտք է ըլլայ որո՞ւ խոստովանիլ, եւ ինչ խոստովանիլ: Խոստովանիլ մեկու մը որ արդար է, այսինքն՝ խոնարհութեամբ եւ ամբողջական վստահութեամբ Աստուծոյ կը դիմէ ներում սրանալու: Միւս կողմէ, Աստուած Ինք կ'ուզէ որ մենք իրարու համար աղօթենք, որպէսզի անոր մէջ երեւի միութիւնը, Քրիստոսի Մարմինը, համայնքը: Այլապէս արդէն կ'ապրինք այնպիսի ժամանակահատուածի մը մէջ, ուր միայն ես-ի շուրջ կը դառնայ: Անոր համար ալ երբ Սուրբ Հոգին է որ կը ներգործէ մեր մէջ ահա այն արեւն զԱստուած կը կանչէ որպէս Հայր որ օգնութեան կը հասնի մեզմէ իւրաքանչիւրին կարիքներուն: Յակոբոս Առաքեալ իբրեւ օրինակ կը վերցնէ Եղիա մարգարէն, որ քանի մը առիթներով կը քեզի մեղքը զինք Աստուածաշունչին մէջ: Քրիստոսի այլակերպութեան պահուն: Խաչելութեան պահուն եւ Յովհաննէսը նմանելու Եղիա մարգարէին: Յակոբոս Առաքեալ կ'ըսէ Եղիա մարգարէն

մեզմէ մէկուն պէս է: Այսինքն՝ նոյն զգացմունքներով, կիրքերու ենթակայ մարդ, րկար բնութեամբ: Ունեցաւ իր վերիվայրումները: Երբ աղօթեց աղօթեց հաւապքով ու ամենայն վստահութեամբ ինչ որ է Աստուծոյ կամքը: Անոր համար ալ անհրաժեշտ է ունենալ իմաստութիւնը այդ կամքը հասկնալու համար:

Ի վերջոյ, Յակոբոս Առաքեալ կ'ուղղէ ըսելով. «Երբ ձեզմէ ոեւէ մէկը ճշմարտութեան ուղիէն մոլորի, եւ ուրիշ մը յաջողի գայն վերադարձնել, գիտցէ՛ թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը թէ՛ անոր հոգին մահուրնէ կը փրկէ եւ թէ՛ իր բազմաթիւ մեղքերուն թողութիւն կը գտնէ» (19-20 հմբ):

Ընդհանրապէս մեզի ծանօթ է, որ ոեւէ նամակ իր աւարտը կը գտնէ փառաբանական խօսքերով, ինչպէս Պօղոս Առաքեալի պարագային: Բայց այսպէղ փարբեր է: Յակոբոս Առաքեալ կ'աւարտէ իր նամակը գործնական քայլեր ցոյց փալով հաւապացեալներուն: Այլ խօսքով՝ հաւապքը գործով արքայայտուած: Արքայայտութիւն մըն է, որ իւրաքանչիւրին կ'ուղղուի հեղեւեալ հարցումը, «արդեօք ճշմարտութենէն մոլորուած ե՞մ»: Ուստի երբեք ալ մենք նուազ չենք անոնցմէ, որոնք այս կամ այն ձեւով կը պայքարին իրենց մոլորութեանց մէջ: Այս բաժինը մեզի կը յիշեցնէ Կայէնի արքայայտութիւնը. «Միթէ ես եղբօրս պահակն ե՞մ»: Պատասխանը: Այո: Ոչ միայն պարտականութիւնն ու պարտաւորութիւնը ունինք իրարու համար աղօթելու, այլ նաեւ զգուշ ըլլալու որպէսզի անոնց չիյնան, կամ եթէ իյնան զիրենք ճշմարտութեան ճամբուն բերելու:

Ճշմարտութենէն մոլորիլ, կը նշանակէ Քրիստոսէն հեռանալ: Ահա մեր պարտականութիւնն է որպէս համայնք զգոյշ ըլլալու եւ հերապնդելու այսպիսի պարագաներ, որպէսզի ետ վերադառնան: Յաճախ այսպիսի մոլորութիւններ կրնան նաեւ վարդապետական ըլլալ, ուր կը փորձեն զԱստուած ճանչնալ մեր ուզած ձեւով որ կը համապատասխանէ մեր ապրելակերպին: Միւս կողմէ, զգոյշ ըլլանք, եթէ երբեք պարտականութիւն ունինք այդպիսին դարձի բերելու, այնպէս չընենք մենք զմեզ արդարացնելու իմաստով: Այլ հեզութեամբ եւ սիրով մօտենալու այդպիսիներուն: Որովհետեւ այդ իսկ է կապը մեր միջեւ ըլլալու եղբայրներ եւ քոյրեր Քրիստոսով: Այդ իսկ է իմաստն ու նպատակը Քրիստոսի ընտանիքին: Այդպիսին հոգին մահըունէ կը փրկէ, որովհետեւ մեղքի վարձքը մահ է, իսկ երբ դառնայ անձը այդ մահէն կը փրկուի: Ի վերջոյ, Աստուծոյ կամքն ու պարտաւորականութիւնը, որ պարտաւոր է ներելու ապաշխարող մեղաւորին մեղքերը: Ուստի մենք որպէս Աստուծոյ որդեգիր զաւակներ, որքանով պարտաւոր ենք ընդունելու եւ ներումի հոգիով քքուելու մեղաւորը որ ապաշխարութեամբ կ'ուզէ վերադառնալ Աստուծոյ, ինչպէս անառակ որդին վերադարձաւ եւ հայրը ընդունեց զինք: Եթէ Աստուած Ինք պարտաւոր է ընդունելու ապաշխարող մեղաւորին, որքան առաւել եւս մենք ընդունելու զինքը: